ՀԱՍՏԱՏՎԱԾ է
«ԳԱՎԱՌԻ ԱԿ. Ա. ԹԱՄԱՄՇԵՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ -Ի
ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ 20 25 Թ. 09.04 ԹԻՎ 23-ՆԻՍՏՈՒՄ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝

Տ. ԳԱՅՐԱՆՅԱՆ

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳԱՎԱՌԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. ԹԱՄԱՄՇԵՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱԱՑՄԱՆ

/նոր խմբագրությամբ/

Գավառ 2025թ.

1. Սյուն կարգով կարգավորում է «Գավառի ակ. Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի /այսուհետ՝ Քոլեջ/ հանրակրթական առարկաների պետական ավարտական քննությունների անցկացման գործընթացը, որը ներառում է քննությունների կազմակերպումը, անցկացումը, ստուգումը գնահատումը, արդյունքների հրապարակումը և բողոքարկումը:

2. Հանրակրթական առարկաների պետական ավարտական քննությունների անցկացման նպատակով ձևավորվում են հանձնաժողովներ, որոնց գործառույթների մեջ են մտնում հանրակրթական առարկաների պետական ավարտական քննությունների թեստերի կազմումը, կազմակերպումն ու անցկացումը, ուսանողների գիտելիքների ստուգումը և գնահատումը:

3. Սույն կարգի համար իրավական հիմք են հանդիսանում ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 6-ի N 78-Ն հրամանի և 2012 թվականի մայիսի 3-ի N 388-ն հրամանի հավելվածները:

4.Սույն կարգը սահմանում է Քոլեջի տնօրինական և /կամ/ ուսումնամեթոդական խորհուրդները, հաստատում և նրանում լրացումներ և փոփոխություններ է կատարում Քոլեջի խորհուրդը:

5. Սույն կարգը ուժի մեջ է մտնում Քոլեջի խորհրդի հաստատումից հետո:

6. Քոլեջում հանրակրթական առարկաների պետական ավարտական քննություններն անցկացնում են ուսումնական պլանով նախատեսված ժամանակահատվածում՝ տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան:

7. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար քննության տևողությունը ավելացվում է ևս 40 րոպե՝ ապահովելով սովորողի կարիքին համապատասխան պայմաններ:

8. Ինտելեկտի (մտավոր) խնդիրներով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները, ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ, կարող են չմասնակցել պետական ամփոփիչ ատեստավորմանը: Այդ դեպքում նրանց տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (դիպլոմ)՝ առանց քննական գնահատականների:

9. Պետական ավարտական քննություններն անցկացվում են հետևյալ առարկաներից.

ա) «Հայոց լեզու և հայ գրականություն» (գրավոր), թեստ, քննության տևողությունը 120 րոպե

բ) «Հայոց պատմություն» (գրավոր), թեստ, քննության տևողությունը 120 րոպե

գ) «Մաթեմատիկա» (գրավոր), թեստ, քննության տևողությունը 120 րոպե

դ) «Ֆիզկուլտուրա» (ստուգարք՝ ըստ ժամանակացույցի /նորմատիվների հանձնում/)

10. Պետական ամփոփիչ ատեստավորման ժամանակ կիրառվում է 20 միավորային գնահատում՝ բացառությամբ «Ֆիզկուլտուրա» առարկայի:

11. Պետական ավարտական քննությունները սկսվում են ժամը 10^{00}-ին: Սովորողները ուսումնական հաստատություն են ներկայանում ժամը 9^{00}-ին:

12. Պետական ավարտական քննությունները անց են կացվում գրավոր թեստով՝ յուրաքանչյուր թեստում ներառելով 45-50 հարց /հիմք ուղեցույցներ/:

13. Պետական ավարտական քննությունների անցկացման հանձնաժողովը՝ կազմված նախագահից և կազմակերպիչներից, ձևավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարի և գործում է տվյալ օրացուցային տարվա ընթացքում:

14. Պետական ավարտական քննությունների արդյունքները ստուգող հանձնաժողովը՝ կազմված նախագահից և անդամներից, ձևավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարի և գործում է տվյալ օրացուցային տարվա ընթացքում:

15. Պետական ավարտական քննությունների հանձնաժողովների կազմը կախված է քննությունների մասնակիցների թվից:

16. Պետական ավարտական քննությունների հանձնաժողովի անվանական կազմը իր հրամանով հաստատում է Քոլեջի տնօրենը՝ հանձնաժողովի աշխատանքներն սկսելուց առնվազն 2 շաբաթ առաջ:

17. Պետական ավարտական քննություններն սկսվելուց առնվազն երկու ամիս առաջ տնօրենի հրամանով հաստատվում է պետական ավարտական քննությունների թեստերը կազմող հանձնաժողով՝ բաղկացած 4 անդամից: Հանձնաժողովի կողմից պետական ավարտական քննությունների թեստերը /առնվազը 4 տարբերակ/ կազմվում են հիմք ընդունելով ԳԹԿ-ի կողմից հրապարակված ուղեցույցները, երաշխավորված շտեմարանները: Հանձնաժողովի կողմից կազմված պետական ավարտական քննությունների թեստերը, պետական ավարտական քննություններից 10 աշխատանքայինօր առաջ, հաստատվում են տնօրենի կողմից, որոնք կնքվում և ծրարվում են: Ծրարները բացվում են պետական ավարտական քննությունների անցկացման օրը՝ ուսանողների ներկայությամբ:

18. «Ֆիզկուլտուրա» առարկայի ամփոփիչ ստուգարքն ընդունվում է Քոլեջի տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից՝ հետևյալ կազմով՝ հանձնաժողովի նախագահ, դասավանդող (քննող) ուսուցիչ և հանձնաժողովի երկու անդամներ:

19. Քննությունների միջև ընկած օրերին դասավանդող դասախոսները սովորողների համար քննական առարկաներից կազմակերպում են խորհրդատվություններ՝ Քոլեջի տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցով:

20. Պետական ավարտական քննությունները կազմակերպվում են քննական կենտրոններում: Քննական կենտրոն է դառնում Քոլեջը: Քոլեջի տնօրենը կամ նրան փոխարինող անձն ի պաշտոնե տվյալ քննական կենտրոնի ղեկավարն է:

21. Քննական յուրաքանչյուր կենտրոնի կազմակերպիչների թիվը սահմանվում է ելնելով ուսանողների թվից: Եթե քննասենյակում կան մինչև 20 ուսանող, աշխատանքները համակարգում է 2 կազմակերպիչ: 20 և ավելի ուսանող լինելու դեպքում նշանակվում է ևս մեկ կազմակերպիչ:

22. Ստուգող հանձնաժողովների անդամների թիվը պայմանավորված է ստուգվող գրավոր աշխատանքների քանակով: Նախընտրելի է՝ հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ստուգի 25 գրավոր աշխատանքից ոչ ավելի:

23. Պետական ավարտական քննությունների կազմակերպիչներին, հերթապահներին նշանակում է քննական կենտրոնի ղեկավարը: Կազմակերպիչները չեն կարող լինել տվյալ քննական առարկայի մասնագետներ:

24. Քննական կենտրոնի ղեկավարը քննասենյակի կազմակերպիչներից մեկին նշանակում է պատասխանատու կազմակերպիչ, որը համակարգում է քննասենյակի կազմակերպիչների աշխատանքը:

25. Սովորողների մուտքը քննասենյակ սկսվում է ժամը 9^{30}-ից՝ քննական կենտրոնի ղեկավարի հրահանգով:

26. Սովորողը մոտենում է վիճակահանության սեղանին և վիճակահանության թերթիկի միջոցով ընտրում իր նստարանի համարը: Կազմակերպիչը սովորողների տվյալ խմբի ցուցակում գրում է նստարանի համարը: Սովորողը ցուցակում ստորագրում է իր տվյալների տողում:

27. Քննասենյակում չի թույլատրվում տեղափոխություններ կատարել:

28. Քննություններին սովորողներին չի թույլատրվում քննասենյակ բերել բջջային հեռախոսներ կամ կապի այլ միջոցներ, տետրեր, դասագրքեր, ուսումնական և այլ ուղեցույց-ձեռնարկներ:

29. Սովորողների՝ քննասենյակում տեղավորվելուց հետո, քննական կենտրոնի ղեկավարը քննասենյակ է բերում քննական թեստերը: Քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը սովորողներին տեղեկացնում է քննասենյակում վարքի կանոնների պահպանման, ինչպես նաև բողոքարկման տեսակների մասին: Քննասենյակում քննության անցկացման կարգն ընթերցելուց և սովորողներին ցուցումներ տալուց հետո կազմակերպիչները բաժանում են թեստերը: Սովորողը, թեստը ստանալուն պես, շապիկի համապատասխան մասում գրում է իր նստարանի և թեստի համարը, որով էլ ձևավորվում է ուսանողի անձնական համարը: Թեստերի վերջնական բաշխումից հետո պատասխանատու կազմակերպիչը հայտարարում է քննության սկիզբը, տևողությունը և գրատախտակին նշում է քննության սկիզբը և ավարտը: Քննության մեկնարկից մեկ ժամ հետո քննասենյակի պատասխանատուն սովորողներին տեղեկացնում է գործընթացի ավարտին մնացած ժամանակի մասին:

30. Քննասենյակից սովորողը կարող է դուրս գալ միայն քննասենյակի պատասխանատու կազմակերպչի թույլտվությամբ և միջանցքի հերթապահի ուղեկցությամբ:

31. Խմբի կազմակերպիչը ավելորդ (չօգտագործված, խոտանված) քննական նյութերը հաշվարկում, արձանագրում է, իսկ քննության ավարտից հետո հանձնում է քննասենյակի պատասխանատու կազմակերպչին:

32.Թեստերի առաջադրանքների բովանդակության վերաբերյալ սովորողի հարցերը թողնվում են անպատասխան:

33.Քննության ընթացքում ի հայտ եկած տպագրական թերություններ ունեցող թեստերը փոխարինվում են նորով:

34.Քննության ավարտից 20 րոպե առաջ քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը սովորողներին հիշեցնում է առաջադրանքների պատասխանները համապատասխան ձևաթղթերի վրա անցկացնելու անհրաժեշտության մասին:

35.Սովորողի կողմից սույն ընթացակարգի պահանջները խախտելու կամ դրանց չենթարկվելու դեպքում քննասենյակի պատասխանատուին իրավունք է վերապահվում մեկ անգամ նախազգուշացում ստացած սովորողին, քննական կենտրոնի ղեկավարի հետ համաձայնեցնելով, հեռացնել քննասենյակից:

36.Հեռացվող սովորողից վերցվում են քննական նյութերը, պատասխանների ձևաթղթի էջի վրա գրվում է՝ «Հեռացված է քննությունից»: Քննասենյակի և խմբի արձանագրությունների մեջ գրանցվում է այդ փաստը, հեռացվող սովորողի համարը, հեռացման պատճառը:

37.Քննության համար նախատեսված ժամանակի ավարտին սովորողը հանձնում է իր առաջադրանքը և ստորագրում իր անվան դիմաց: Եթե սովորողն ավարտել է աշխատանքը սահմանված ժամանակից շուտ, ապա նա կարող է այն հանձնել և, ստորագրելով իր անվան դիմաց, դուրս գալ քննասենյակից: Քննության համար հատկացված ժամանակի ավարտին կազմակերպիչները սեղաններից հավաքում են քննական թեստերը:

38.Սահմանված ժամկետում գրավոր աշխատանքը չավարտած սովորողներն այն հանձնում են անավարտ վիճակում:

39. Պատասխանատու կազմակերպիչը քննական աշխատանքները և քննության արձանագրությունը հանձնում է քննական կենտրոնի ղեկավարին: Քննական կենտրոնի ղեկավարը, ներկայացված քննական աշխատանքները վերահաշվարկելով, լրացնում է քննական կենտրոնում անցկացված քննության վերջնական արձանագրությունը, որտեղ նշվում է քննության մասնակիցների, բացակաների, քննությունից հեռացվածների, որևէ պատճառով քննությունն ընդհատածների թիվը (առկայության դեպքում):

40.Պետական ավարտական քննական առաջադրանքները ստուգվում են քննական կենտրոնի ղեկավարի հրամանով ստեղծված ստուգող հանձնաժողովի կողմից, քննության օրը՝ ժամը 14⁰⁰-ից՝ տնօրենի կողմից հաստատված ճիշտ պատասխանների հիման վրա: Ստուգող հանձնաժողովի նախագահն ի պաշտոնե քննական կենտրոնի ղեկավարն է:

41.Քննական գրավոր աշխատանքները քննական կենտրոնի ղեկավարը փոխանցում է դրանք ստուգող հանձնաժողովին: Ստուգված գրավոր աշխատանքները փոխանցվում են քննական կենտրոնի ղեկավարին, ապա՝ սահմանված կարգով արխիվացվում:

42. Ստուգող հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ:

43.Գրավոր աշխատանքները գնահատելիս, ստուգող հանձնաժողովի անդամների միջև տարաձայնություն առաջանալու դեպքում, հարցը լուծվում է ստուգող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:

44.Քվեարկության արդյունքում ստացված հավասար ձայների դեպքում վճռորոշ է ստուգող հանձնաժողովի նախագահի առաջարկած գնահատականը.

45.Ստուգումն իրականացվում է գնահատման չափանիշներին համապատասխան: Գրավոր աշխատանքի սևագրությունը չի ստուգվում և չի գնահատվում:

46.Պետական ավարտական քննական աշխատանքների արդյունքները հրապարակվում են տվյալ քննության հաջորդ օրը՝ մինչև ժամը 17⁰⁰-ն՝ և փակցվում է քննական կենտրոնի մուտքի մոտ:

47. Քննական կենտրոնում քննական գնահատականների ցուցակներն առանձնացվում են ըստ կուրսերի, ցուցակները վավերացվում են ստուգող հանձնաժողովի նախագահի կողմից:

48.Պետական ավարտական քննության թույլատրվում են այն ուսանողները, ովքեր չունեն քննական առարկաներից անբավարար գնահատականներ:

49.«Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն», «Մաթեմատիկա» և «Ֆիզկուլտուրա» առարկաներից 1-3 միավոր ունենալու դեպքում սովորողները չեն մասնակցում հանրակրթական առարկաների պետական ավարտական քննություններին և հանձնում են վերաքննություն հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում:

50.Վերաքննության արդյունքները հիմք են հանդիսանում «Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն», «Մաթեմատիկա» առարկաներից քննական գնահատականներ և «Ֆիզկուլտուրա» առարկայից ստուգարք նշանակելու համար:

51.Պետական ավարտական քննություններից 1-7 միավոր գնահատված լինելու կամ քննության օրը չներկայանալու դեպքում, եթե դրանց առավելագույն թիվը 3-ն է, վերաքննություն է հանձնում Քոլեջում հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում:

52.Վերաքննության չներկայացած կամ վերաքննությունները հանձնելուց հետո առնվազն 1 առարկայից 1-7 միավոր գնահատված սովորողը կրկնում է տվյալ ուսումնական տարվա դասընթացը, եթե չի լրացել նրա 19 տարին:

53.19 տարին լրացած՝ պետական ավարտական քննություններից 1-7 միավոր գնահատված և քննությանը չմասնակցած սովորողները դուրս են մնում Քոլեջից:

54.Քննությունների կազմակերպման, անցկացման և արդյունքների գնահատման վերաբերյալ բողոքները կարող են լինել՝

1) քննության անցկացման կարգի խախտման մասին.

2) քննության արդյունքների հետ անհամաձայնության մասին:

55. Սույն կարգի 54-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում սովորողը կարող է բողոք ներկայացնել քննական կենտրոնի ղեկավարին՝ քննության ավարտից անմիջապես հետո: Կենտրոնի ղեկավարը տեղում բողոքը քննարկում է հանձնաժողովի անդամների հետ և պատասխանում այն ներկայացնողին:

56. Սույն կարգի 54-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում գրավոր բողոքները ներկայացվում են հանձնաժողովի նախագահին՝ քննության արդյունքները հրապարակելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում: Պետական ավարտական գրավոր քննության բողոքի արդյունքները ոչ ուշ, քան դիմումն ընդունելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, գրավոր ներկայացվում են դիմողին:

57. Բողոքարկման արդյունքների հետ անհամաձայնության դեպքում դիմումի հեղինակը կարող է բողոքարկել վերադասության կարգով՝ Նախարարություն կամ դատարան:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N____

«Ֆիզկուլտուրա» առարկայից ամփոփիչ ստուգարքի անցկացման

«---» ------ 20----թ.

ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի «----------» մասնագիտության --- կուրսում առարկա՝ «Ֆիզկուլտուրա»
անական հանձնաժողովի նախագահ՝ ----------
նդամ՝ ----------

տուգարքին թույլատրվել են_____ ուսանող
երկայացել են_____ ուսանող

Հ/Հ	Ուսանողի ազգանունը ազգանունը,հայրանունը	Վազք 30 մետր		Հեռացատկ տեղից		Վազք 1000մ տղա/որոպե/ Վազք 500 մ աղջիկ/որոպե		Զգումներ կախ դրությունից /անգամ/		Ձեռքերի ծալում և ուղղում, հենում պառկած մարզանստարանին դրությունից/անգամ/		Ստուգարք
		Արդյունք	Գնահատական	Արդյունք	Գնահատական	Արդյունք	Գնահատական	Արդյունք	Գնահատական	Արդյունք	Գնահատական	
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												
13												
14												

Հանձնաժողովի նախագահ՝ ----------

Անդամներ՝ ----------
Քննող դասախոս՝ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N____

«----------» առարկայի պետական ավարտական քննության անցկացման

«-------» ------- 202--թ.

ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի «----------» մասնագիտության ------ կուրս ----------քննասենյակ

ենական հանձնաժողովի նախագահ՝ ----------

ատասխանատու կազմակերպիչ՝ ----------

ազմակերպիչներ/ներ/՝ ----------

_____

ննությանը թույլատրվել են_____ ուսանող

ննությանը ներկայացել են_____ ուսանող

ննության սկիզբը ժամը՝_____ավարտը ժամը՝_____

Հ/Հ	Ուսանողի ազգանունը,անունը,հայրանունը	Ուսանողի անձնական համարը	Գնահատական (թվերով և տառերով)
1.			
2.			
3.			
4.			
5.			
6.			
7.			
8.			

Նախագահ՝ ----------

Պատասխանատու կազմակերպիչ՝ ----------

Կազմակերպիչ /ներ/՝ ----------

_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N____

«----------» առարկայի պետական ավարտական քննության թեստերի քանակի վերաբերյալ

«-------» ------- 202--թ.

ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական ագրոտեխնիկական քոլեջ» ՊՈԱԿ-ի «----------» մասնագիտության ------ կուրս

Քննասենյակի համարը	Թեստերի քանակը			
	հատկացված	օգտագործված	չօգտագործված	խոտանված

Նախագահ՝ ----------

Պատասխանատու կազմակերպիչ՝ _____

Կազմակերպիչ /ներ/՝ _____

_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N____

«----------» առարկայի պետական ավարտական քննության անցկացման

«-------» ------- 202--թ.

ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական ուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի «----------» մասնագիտության ------ կուրս
----------քննասենյակ
ննական հանձնաժողովի նախագահ՝ ----------
ատասխանատու կազմակերպիչ՝ ----------
ազմակերպիչ /ներ/՝ ----------
_____
ննությանը թույլատրվել են _____ ուսանող
երկայացել են_____ ուսանող
ննության սկիզբը ժամը՝_____ավարտը ժամը՝_____

Հ/Հ	Ուսանողի ազգանունը,անունը,հայրանունը	Նստարանի համարը	Թեստի համարը	Թեստը		Նշում
				ստացավ	հանձնեց	
1.						
2.						
3.						
4.						
5.						
6.						
7.						

Նախագահ՝ ----------

Պատասխանատու կազմակերպիչ՝ ----------

Կազմակերպիչ /ներ/՝ _____

_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N____

«----------» առարկայի պետական ավարտական քննության անցկացման

«-------» ------- 202--թ.

ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական ուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի «----------» մասնագիտության ------ կուրս առարկա՝ «----------»

----------քննասենյակ

նական հանձնաժողովի նախագահ՝ ----------

ատասխանատու կազմակերպիչ՝ ----------

ազմակերպիչ /ներ/՝ ----------

ննությանը թույլատրվել են _____ ուսանող

ննությանը ներկայացել են _____ ուսանող

ննության սկիզբը ժամը՝_____ավարտը ժամը՝_____

Բովանդակություն	Նշում	բովանդակություն		Նշում
Քննության ներկայացած ուսանողների թիվը		Քննությունը հիվանդության պատճառով անավարտ թողած	ուսանողի (նշել խմբի ցուցակում ուսանողի համարը և պատճառը)	
Չներկայացած ուսանողների թիվը			կազմակերպիչ (նշել հեռացման ժամը, րոպեն և պատճառը)	
Քննությունից հրաժարված ուսանողների թիվը (նշել խմբի ցուցակում ուսանողի համարը)		Քննությունից հեռացված	ուսանողի (նշել խմբի ցուցակում ուսանողի համարը և պատճառը)	
			կազմակերպիչ (նշել պատճառը)	
Զգուշացված ուսանողների թիվը (նշել խմբի ցուցակում ուսանողի համարը և զգուշացման պատճառը)		Քննության ընթացքի ընդհատում կամ դադար (նշել տևողությունը և պատճառը)		
Տպագրական թերություն ունեցող քննական նյութերի քանակը(նշել թերության բնույթը)		Ընթացակարգային բողոք ներկայացրած ուսանողի (նշել խմբի ցուցակում ուսանողի համարը)		

Նախագահ՝ ----------

Պատասխանատու կազմակերպիչ՝ ----------

Կազմակերպիչ /ներ/՝ ----------